

ARMENIAN CROSSWORD

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՌ (Արեւելահայերեն տարբերակ)

User's Guide

E

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՌ

«Հայկական Խաչքառ» այս ծրագիրը նախատեսված է համակարգչի օգնությամբ հայկական խաչքառեր լուծելու համար:

Առկա է երկու տարբերակ՝ ավանդական եւ արդի ուղղագրությամբ:

Ծրագրի օգտագործման համար նախապես ձեզ տրամադրվում է 16 խաչքառ, որոնք պարբերաբար համալրվում են նոր խաչքառերով:

Լրացուցիչ նոր խաչքառեր դուք կարող եք ներբեռնել համացանցի www.armcrossword.com կայքէջից, սեղմելով "Update new crosswords" կոճակը:

SYSTEM REQUIREMENT

Ծրագրի աշխատանքի համար՝ համակարգչի առումով հատուկ սահմանափակում չկա, աշխատում է ներկայումս գործող Windows-ի բոլոր տարբերակներով եւ պահանջում է ոչ մեծ հիշողություն, որը մատչելի է արդի բոլոր համակարգիչների համար: Այն ամբողջությամբ ինքնաբավ է (stand alone) եւ չի պահանջում օժանդակ որեւէ այլ ծրագիր: Չի պահանջվում նաեւ հայկական որեւէ տառատեսակի առկայությունը (անհրաժեշտ հայկական տառերը կցված են ծրագրին):

ԽԱՉՔԱՌԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՀԱՍՏԱԿԱՐԳՉԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ:

Ծրագրի աշխատանքը սկսելու համար սեղմեք "ArmCross (East)" Icon-ը: Այն բացվում է ներածական էջով, որտեղ պետք է տրվի խաչքառի համարը: Բացի այս բացատրականից, այդ էջում դուք կարող եք ընտրել նաեւ խաչքառի ձեր նախընտրած գույնը, հաջորդաբար սեղմելով "color" կոճակը կամ վերադառնալ սեւ գույնին սեղմելով "black" կոճակը: Իսկ այս բացատրականը տեսնելու կամ տպելու համար սեղմեք "Guide" կոճակը:

Այնուհետեւ մտցրեք խաչքառի ձեր ընտրած համարը: Սեղմեք "Enter" կամ "Start" կոճակը, անցնելու համար ծրագրի հաջորդ հիմնական էջին:

"Crossword number" հարցին պետք է մտցնել ձեր համակարգչի մեջ արդեն իսկ ներդրված խաչքառերի համարներից մեկը (նախքան լրացուցիչ խաչքառերի ներմուծումը այն հավասար է 16-ի): Տվյալ համարի խաչքառի չգոյության դեպքում կստանաք "Crossword number doesn't exist" գրությունը: Շարունակեք մուտք անել խաչքառի ընդունելի համարը:

Հաջորդ էջը պարունակում է ձեր ընտրած խաչքառը եւ հարցերի հորիզոնական եւ ուղղահայաց ցանկը: Խաչքառի հարցերը եւ համապատասխան վանդակները, ի տարբերություն տպագրվող խաչքառերի, **համարակալված չեն**: Համակարգչի պարագային այն ավելորդ է եւ անտեղի, քանի որ օգտագործված է շատ ավելի պարզ եւ հարմար եղանակ:

Ձեզ հետաքրքրող հարցը կամ բառը ընտրելու համար կարելի է օգտագործել “Mouse”-ը՝ այն սեղմելով տվյալ հարցի կամ խաչբառի ցանկացած վանդակի որևէ մասում: Այս դեպքում միաժամանակ կգունավորվեն եւ հարցը եւ համապատասխան վանդակները: (Եթե քառակուսին խաչմերուկային է, ապա նախ ընտրվում է հորիզոնականը: Հաջորդ սեղմումը կփոխի ուղղությունը):

Վանդակների կամ հարցերի ընտրության համար “Mouse”-ի փոխարեն կարող եք օգտագործել նաեւ ստեղնաշարի ← → ↑ ↓ ստեղները, որոնք հատկապես հարմար են, եթե ընտրությունը կատարվում է հարցերի ցուցակից:

Ընտրությունից հետո մտցրեք տառերը: Տառերի մուտքի համար ձեզ տրամադրվում է հայկական ստեղնաշարի 2 տարբերակ (Phonetic եւ Alphabet): Սեղմեք համապատասխան կոճակը ընտրելու համար տարբերակը եւ ստանալու ստեղնաշարի պատկերը: Սեղմեք այն կրկին՝ պատկերը վերացնելու կամ ստեղնաշարը վերստին պատկերելու համար:

Տառերի մուտքի ժամանակ կարող եք օգտագործել սրբագրման Backspace եւ Delete ստեղները: (Backspace-ը վերացնում է տառը, Delete-ը վերացնում է բառը ամբողջությամբ):

(!) Որեւէ լրացված բառ փոխելու կամ ուղղելու համար նախ պետք է այն հեռացնել **ամբողջությամբ** del-ի օգնությամբ, այլապես ոչ մի կերպ չեք կարող այն ուղղել:

(!) Եթե օգտագործում եք ստեղնաշարի փոխակերպիչ (keyboard driver) այլ տառատեսակներ օգտագործելու համար, ապա պետք է ընտրել ստեղնաշարի **անգլերեն** տարբերակը, հակառակ դեպքում այն չի աշխատի եւ տառի մուտքը կարգելակվի:

Եթե հայկական տառեր մուտք անելու փորձառություն չունեք, տառերի մուտքը կարող եք կատարել նաեւ ստեղնաշարի պատկերի միջոցով՝ օգտագործելով Mouse-ը:

Հավաքված բառը ֆիքսելու համար կարելի է օգտագործել Enter, որն աշխատում է **ամբողջությամբ** լրացված բառերի դեպքում (կիսատ լրացված բառի դեպքում այն չի աշխատի): Չնայած Enter-ի օգտագործման համար որեւէ արգելք չկա, սակայն այն անհրաժեշտ չէ, քանի որ հաջորդ վանդակի (կամ հարցի) ընտրությամբ նախորդը **ինքնաբերաբար** ֆիքսվում է:

Նշենք, որ «դատարկ» բառ կամ վանդակ է համարվում նաեւ այն բառը, որը պարունակում է «ոչ սեփական» խաչածեված այլ բառերի տառեր (տվյալ բառի սրբագրման կամ հեռացման ժամանակ դրանք չեն վերանում):

(!) Մուտքի ժամանակ բառը պետք է հավաքվի **ամբողջությամբ**, ներառյալ խաչածեվող այլ բառերի առկա տառերը, հակառակ դեպքում մուտքը կարգելակվի եւ տառը կգունավորվի զգուշացման համար:

Եւս ծրագրի օգտագործման մի բացառիկ հնարավորության մասին:

Եթե որոնելի բառը պարունակում է **գեթ մեկ** խաչմերուկային տառ, ապա սեղմելով Clue կոճակը, կստանաք ցանկը բոլոր այն բառերի, որոնք համապատասխանում են արդեն իսկ տեղադրված այդ տառին (կամ տառերին): Եթե ցանկը չի տեղավորվում իր համար հատկացված պատուհանի մեջ, հաջորդ էջը կարող եք ստանալ (կամ վերադառնալ նախորդին) օգտագործելով “Mouse”ը կամ ← → ստեղները: (Եթե այդ տառերին համապատասխանող բառ չկա կստանաք “No Match” գրությունը):

Երբ ցուցակից անհրաժեշտ բառը ընտրված է, ապա “mouse”ը տեղադրելով այդ բառի վրա եւ սեղմելով Mouse-ի սեղմակը, բառը կը գրանցվի խաչբառի համապատասխան վանդակում:

Մինչ այդ, որեւէ ժամանակ “Clue” ռեժիմից դուրս գալու համար սեղմեք Enter կամ կրկին սեղմեք Clue կոճակը եւ կամ ընտրեք հաջորդ բառը կամ հարցը, օգտագործելով “Mouse”ը կամ ← → ↑ ↓ ստեղները:

(!) “Clue” կոճակը չի գործի, եթե չունեք լրացված պատասխանների բավարար քանակ: Հետեւեք կոճակի ներքեւի նշակետերին, տեսնելու համար տվյալ պահին ձեզ տրամադրվող Clue-ների քանակը:

Մասամբ լուծված խաչբառը հետագա օգտագործման նպատակով պահելու համար, սեղմեք “Save” կոճակը (ի հարկին կարող եք անջատել համակարգիչը): Որեւէ ժամանակ այն կրկին վերականգնելու եւ աշխատանքը շարունակելու համար սեղմեք “Load”:

Նշենք նաեւ, որ կարող եք **միաժամանակ** լուծել տարբեր խաչբառեր, յուրաքանչյուրի համար “save”ի միջոցով, պահելով միջանկյալ արդյունքները:

“Solution” կոճակը սեղմելով դուք կստանաք տվյալ խաչբառի լուծումը: Սակայն այն չի գործի, քանի ձեռք չեք բերել այն օգտագործելու «իրավունքը»: Այդ իրավունքը կախված է ձեր գտած բառերի քանակից եւ խաչբառի լուծման համար ձեր տրամադրած ժամանակից: Տեսնելու համար թե ինչքանով եք մոտեցել այդ իրավունքին, հետեւեք կոճակի ներքեւում տեղաշարժվող կանաչ նշագծիկին:

Ցանկանում ենք ձեզ հաճելի ժամանց:

Ուրախ կլինենք ստանալու ձեր դիտողությունները

Ծրագրի հեղինակ: Օնիկ Փիրումյան
Author: Onik Piroumian
Tel: 9808 5795 - Email: piroum@ihug.com.au